



## Կարգապահական գործ թիվ ԿԳ-19083

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2019 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 275-րդ ԿԳ դռնբաց նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԹԻՎ ԿԳ/161-Ա**

### **ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՇԵՂ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ խորհրդի անդամ Տիգրան Խուրշուդյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի և Հարություն Հարությունյանի կազմով,  
քարտուղարությամբ՝ Գ. Գևորգյանի  
քննության առնելով փաստաբան Մուշեղ Առաքելյանի (արտոնագիր թիվ 1762) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

### **Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

#### **1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի պետ Ա.Ս Պողոսյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ ըստ էության հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում քննվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 16177419 քրեական գործը, որի նախաքննության ընթացքում՝ 2019 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը 13:55-ին, Սմբատ Մուշեղի Աղաբաբյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին և ձերբակալվել ապօրինի թմրամիջոցներ ձեռք բերելու և պահելու կասկածանքով: Նույն օրը կասկածյալ Ս. Աղաբաբյանի ցանկությամբ որպես նրա շահերի պաշտպան ներգրավվել է ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Մուշեղ Առաքելյանը:

Դիմողը նշել է, որ քրեական գործով պաշտպան Մուշեղ Առաքելյանին և վերջինիս վստահորդ, կասկածյալ Սմբատ Աղաբաբյանին թույլատրվել է ունենալ

կոնֆիդենցիալ հանդիպումներ, որոնց ընթացքում կասկածյալ Սմբատ Աղաբաբյանը պաշտպան Մ.Առաքելյանի անձնական օգտագործման 096-65-91-22 հեռախոսահամարից մի քանի անգամ զանգահարել է տարբեր համարների, այդ թվում երկու անգամ ոմն «Սամոյի»: Առաջին հեռախոսազանգը կատարել է 2019 թվականի ապրիլի 09-ին՝ ժամը 23:57-ին, «Սամոյին» հասկացրել է, որ տեղեկացնի Վրեժ Ազիզյանին, ով նշված քրեական գործով հետազայում ներգրավել է մեղադրյալ և որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, իր ձերբակալված լինելու մասին և Վ.Ազիզյանի վերաբերյալ կատարված հարցադրումների մասին: Ավելին, Սմբատ Աղաբաբյանը մոտ 30 րոպե հետո կրկին իր պաշտպանի՝ Մուշեղ Առաքելյանի հեռախոսահամարով զանգահարել է «Սամոյին» և հեռախոսազրույցի ընթացքում վերջինիս խնդրել է Վրեժ Ազիզյանին փոխանցել, որ «իր գլխի ճարը տեսնի», տեղեկություններ փոխանցի ինչպես իր ցուցմունքի, այնպես էլ գործով անցնող այլ անձանց ցուցմունքների վերաբերյալ:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Մուշեղ Առաքելյանը, օգտվելով օրենքով վստահորդի հետ կոնֆիդենցիալ հանդիպումներ ունենալու իրավունքից, իր բջջային հեռախոսը տրամադրել է ձերբակալված Սմբատ Աղաբաբյանին հեռախոսազանգեր կատարելու համար այն պայմաններում, երբ սահմանափակված է եղել վերջինիս կողմից հեռախոսազանգեր կատարելու հնարավորությունը, այդ հեռախոսազանգերը միտված են եղել, ոչ թե իր հարազատների հետ կապ հաստատելուն, այլ թմրամիջոցներ ապօրինի իրացնող անձին հնարավոր բերման ենթարկվելու վերաբերյալ զգուշացնելուն և նախաքննության վերաբերյալ տեղեկություններ փոխանցելուն: Ընդ որում՝ այդ գործողությունները կատարվել են այն ժամանակ, երբ դեռ Վրեժ Ազիզյանը բերման չէր ենթարկվել և միայն ոստիկանության աշխատակիցների օպերատիվ աշխատանքի շնորհիվ հնարավոր է եղել կանխել վերջինիս փախուստը և բերման ենթարկել 2019 թվականի ապրիլի 10-ին ժամը 00:55-ին:

Դիմողը հայտնել է, որ պաշտպան Մուշեղ Առաքելյանը, թույլատրելով Սմբատ Աղաբաբյանին իր հեռախոսահամարով զանգեր կատարել, ոչ միայն դուրս է եկել օրենքներով հստակ սահմանված իր իրավասության շրջանակներից, խախտել փաստաբանի վարքագծի և էթիկայի կանոններն, այլև իր վարքագծով չի ծառայել արդարադատության շահերին՝ իր մասնագիտական գործունեության նկատմամբ չցուցաբերելով հարգալից վերաբերմունք, որի հետևանքով էլ հասարակության շրջանում կարող է խաթարվել փաստաբանի հեղինակությունը և ազնվությունը:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 01.07.2019թ. թիվ 208-Ա/ԿԳ-19083 որոշմամբ փաստաբան Մուշեղ Առաքելյանի (արտոնագիր թիվ 1762) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին կետի, 20-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.2.2" և 6.2.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

04.07.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**)::

### **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցումները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

Դիմողը այլ դիրքորոշում, քան դիմումով արտահայտված դիրքորոշումն է, չի ներկայացրել:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

#### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.**

Սույն կարգապահական գործի քննության ընթացքում փաստաբան Մուշեղ Առաքելյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) 18.06.2019 թվականին Պալատում մուտքագրված գրությամբ հայտնել է, որ Ս.Աղաբաբյանի պաշտպանությունը իրականացնելու ժամանակ կոնֆիդենցիալ հանդիպման ընթացքում գործին վերաբերող հանգամանքները քննարկելուց հետո, Ս. Աղաբաբյանը խնդրել է իր բջջային հեռախոսը քրոջը զանգահարելու համար, ինքը նրան տրամադրել է իր բջջային հեռախոսահամարը, որից նա զանգահարել է իր քրոջը՝ խոսել հետո: Այդ ժամանակ ինքը դուրս է եկել սենյակից, որից մի քանի րոպե անց նորից ներս է գնացել, վերջինս արդեն իսկ ավարտած է եղել խոսակցությունը և հեռախոսը հանձնել է իրեն, որից հետո տեղափոխվել են քննիչի սենյակ և իրենց պարզ է դարձել, որ արդեն իսկ բաժին բերման է ենթարկվել Վրեժ Ազիզյանը:

Բացատրությամբ փաստաբան Մուշեղ Առաքելյանը նաև հայտնել է, որ հաջորդ օրը քննիչը իրեն հայտնել է իր հեռախոսահամարից տարբեր անձանց զանգահարելու փաստի մասին և ըստ ներկայացված փաստի զանգահարել էր ոմն «Սամոյին» և մի քանի վայրկյան խոսակցություն ունեցել, որի բովանդակությունից չէր բխում, որ Ս. Աղաբաբյանը փորձում էր տեղեկություն փոխանցել:

30.10.2019 թվականին Պալատում մուտքագրված բացատրությամբ Պատասխանողը հայտնել է, որ թիվ 16177619 քրեական գործով նույն թվականի ապրիլի 9-ին ժամը 20:00-21:00-ն ընկած հատվածում իրեն անձանոթ համարից զանգահարել է վերը նշված քրեական գործով մեղադրյալ Սմբատ Աղաբաբյանը և հայտնել, որ գտնվում է Մալաթիայի բաժնում, խնդրել որպեսզի այցելի իրեն: Նույն օրը ժամը 22:10-ի սահմաններում ինքը գնացել է Մալաթիայի բաժին, որտեղ տեղեկացել է, որ Սմբատ Աղաբաբյանն արդեն բավականին երկար ժամանակ այնտեղ է գտնվում: Մտնելով այն սենյակ, որտեղ գտնվում էր Ս.Աղաբաբյանը, ինքը մի պահ զարմացել է, քանի որ սենյակում միաժամանակ գտնվում էին թվով չորս այլ ոստիկանության աշխատակիցներ: Տվյալ պահին իրեն չեն հայտնել Ս.Աղաբաբյանի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն, իսկ վերջինս հայտնել է, որ արդեն գրել է բացատրություն և իրեն ասել են սպասի: Նույն ժամանակահատվածում սենյակում գտնվող անձանց ներկայությամբ Ս.Աղաբաբյանը ևս կատարում էր հեռախոսազանգանգեր, մասնավորապես զանգել է իր ընկերներին վերջիններից

խնդրել ծխախոտ և այլ անհրաժեշտ իրեր և կատարել է այլ զանգեր, որի ընթացքում գործով զբաղվող քննիչը և ոստիկանության աշխատակիցները որևէ կերպ չէին արձագանքում վերջինիս գործողություններին, ինչից ինքը ենթադրել է, որ որևէ սահմանափակում չկա: Այնուհետև Ս.Աղաբաբյանի հետ առանձնացել է կողքի սենյակում, որտեղ մի քանի րոպե զրուցել են: Հաջորդիվ Ս.Աղաբաբյանը խնդրել է իր հեռախոսը՝ ընտանիքի անդամների հետ խոսելու և որդու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Փաստաբանը Ս.Աղաբաբյանին տրամադրել է իր հեռախոսահամարը, նա զանգել է իր քրոջը: Երբ սկսել են խոսել, ինքը սենյակից դուրս է եկել՝ քննիչից ստանալու Ս.Աղաբաբյանի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն, որից հետո վերադարձել է սենյակ, իսկ հետագայում Ս.Աղաբաբյանի հետ վերադարձել են ընդհանուր սենյակ: Վերադառնալուց մի քանի րոպե անց քննիչը և ոստիկանության աշխատակիցները իրար շնորհավորում էին Վրեժին բերելու վերաբերյալ, իսկ մի քանի րոպե անց վրեժը նույն շենքի նույն հարկում էր՝ կողքի սենյակում, սենյակի դուռը բաց էր: Այնուհետև Ս.Աղաբաբյանին տեղափոխել են ՁՊՎ, այդ իսկ ժամանակ ինքը տեղեկացել է, որ Ս.Աղաբաբյանը ձերբակալված է: Ինքը նույնիսկ ձերբակալման արձանագրություն չի ունեցել, այն հաջորդ օրը միայն փոխանցվել է իրեն, որից հետո ինքն այնտեղից հեռացել է: Հաջորդ օրն փաստաբանը այցելել է Մալաթիայի քննչական բաժին, որտեղ քննիչ Հ.Քարտաշյանը հայտնեց, որ Ս.Աղաբաբյանն իր հեռախոսահամարից խոսել է ոմն Սամոյի հետ, ինչից իբր երևում էր, որ Ս.Աղաբաբյանը փորձել է վերջինիս միջոցով զգուշացնել Վրեժին, սակայն ներկայացված տեքստից չէր կարող հասկացվել, որ Ս.Աղաբաբյանը փորձ է կատարել օգնել Վրեժին, և եթե դա այդպես հստակ էր, ապա սույն կարգապահական վարույթի շրջանակներում քննիչը կարող էր ներկայացնել խոսակցության այդ հատվածը, սակայն դա չի արվել, ինչն էլ խոսում է այն մասին, որ նշված խոսակցությունը չէր կարող հանդիսանալ Վրեժին զգուշացնելու փորձ: Նույն բացատրությունը հաջորդ օրը նույնիսկ տրվել է քննիչին և ժամերի ուսումնասիրությունից ակնհայտ էր, որ Ս.Աղաբաբյանի խոսակցությունից առաջ արդեն իսկ Վրեժը գտնվում էր Մալաթիայի բաժնում:

Պատասխանողը ներկայացրել է նաև Ս.Աղաբաբյանի բացատրությունը, որում վերջինս հայտնել է, որ իր կողմից փաստաբանի հեռախոսով խոսելու ընթացքում վերջինս սենյակում չի գտնվել:

#### **4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

03.09.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որում հաստատված է համարել հետևյալ փաստերը.

1) ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ.Հ.Քարտաշյանի վարույթում քննվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 16177419 քրեական գործը:

2) Նշված գործով նախաքննության ընթացքում 2019թ-ի ապրիլի 09-ին, ժամը 13:55-ին, Սմբատ Աղաբաբյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան

քաղաքի վարչության Մալաթիայի բաժին և ձերբակալվել ապօրինի թմրամիջոցներ ձեռք բերելու և պահելու կասկածանքով:

3) Նույն օրը կասկածյալ Ս.Աղաբաբյանի ցանկությամբ որպես նրա շահերի պաշտպան ներգրավվել է ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Մուշեղ Առաքելյանը:

4) Քննչական բաժնում գտնվելու ընթացքում պաշտպան Մուշեղ Առաքելյանին և վերջինիս վստահորդ, կասկածյալ Սմբատ Աղաբաբյանին թույլատրվել է ունենալ կոնֆիդենցիալ հանդիպում, որի ընթացքում կասկածյալ Սմբատ Աղաբաբյանն իր քրոջը զանգահարելու պատրվակով խնդրել և պաշտպան Մ. Առաքելյանից վերցրել է վերջինիս անձնական օգտագործման հեռախոսն ու 096-65-91-22 հեռախոսահամարից մի քանի անգամ զանգահարել է տարբեր անձանց, այդ թվում ոմն «Մամոյի»:

6) 09.04.2019թ-ին ժամը 22:57-ին, կասկածյալ Սմբատ Աղաբաբյանը հեռախոսագրույց է ունեցել ոմն «Մամոյի» հետ և նրան հասկացրել, որ տեղեկացնի Վրեժ Ազիզյանին իր ձերբակալված լինելու և Վ.Ազիզյանի վերաբերյալ կատարված հարցադրումների մասին:

7) Վրեժ Ազիզյանը, ում նույն օրը բերման են ենթարկել ոստիկանության Մալաթիայի բաժին, հետագայում նշված քրեական գործով ներգրավվել է մեղադրյալ և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություններ չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 04.09.2019թ.-ին:

Պալատի խորհրդի նիստերը տեղի է ունեցել 29.10.2019թ. ժամը 18:30-ին և 26.11.2019թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝***

1) ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ.Քարտաշյանի վարույթում քննվում է

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և 268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 16177419 քրեական գործը: Նշված գործով նախաքննության ընթացքում 2019թ-ի ապրիլի 09-ին, ժամը 13:55-ին, Սմբատ Աղաբաբյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին և ձերբակալվել ապօրինի թմրամիջոցներ ձեռք բերելու և պահելու կասկածանքով:

*Նշված փաստերը հաստատվում են Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, ձերբակալման վերաբերյալ արձանագրությամբ:*

2) Սմբատ Աղաբաբյանի կողմից փաստաբան Մուշեղ Առաքելյանի հեռախոսով խոսելու ընթացքում վերջինս դուրս է եկել սենյակից և վերադարձել է, երբ խոսակցությունն արդեն ավարտված է եղել:

*Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի և Սմբատ Աղաբաբյանի բացատրություններով:*

*Սույն կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել Սմբատ Աղաբաբյանի կողմից հեռախոսազանգեր կատարելու հնարավորությունը սահմանափակված լինելու վերաբերյալ ապացույցներ:*

#### **6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Մուշեղ Առաքելյանը փաստաբան է հանդիսանում 14.06.2014թ., և 2014-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ընթացիկ)<sup>1</sup>:

#### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մուշեղ Առաքելյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, 20-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 և 6.2.1 ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել հետևյալ պայմանաբանությամբ.

**Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:**

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:**

**Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝ այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում.**

**Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի փակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):**

<sup>1</sup> Սույն թվի մեջ չի հաշվարկվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 01.07.2019թ. թիվ 208-Ա/ԿԳ-19083 որոշմամբ հարուցված կարգապահական գործը

**Կանոնագրքի 6.2.1 ենթակետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է ձերբակալվածներին պահելու վայրերում, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում պահպանել սահմանված կարգը և իր վստահորդին կամ այլ անձի չփոխանցել արգելված իրեր:

Նշված կանոնից հետևում է, որ փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը: Միևնույն ժամանակ Կանոնագրքով փաստաբանի վրա դրվում է պարտականություն ձերբակալվածներին պահելու վայրերում, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում պահպանել սահմանված կարգը և իր վստահորդին կամ այլ անձի չփոխանցել արգելված իրեր:

Սույն գործով Դիմողը նշել է, որ փաստաբան Մուշեղ Առաքելյանը, օգտվելով օրենքով վստահորդի հետ կոնֆիդենցիալ հանդիպումներ ունենալու իրավունքից, իր բջջային հեռախոսը տրամադրել է ձերբակալված Սմբատ Աղաբաբյանին հեռախոսազանգեր կատարելու համար այն պայմաններում, երբ սահմանափակված է եղել վերջինիս կողմից հեռախոսազանգեր կատարելու հնարավորությունը: Այդ հեռախոսազանգերը միտված են եղել, ոչ թե իր հարազատների հետ կապ հաստատելուն, այլ թմրամիջոցներ ապօրինի իրացնող անձին հնարավոր բերման ենթարկվելու վերաբերյալ զգուշացնելուն և նախաքննության վերաբերյալ տեղեկություններ փոխանցելուն:

*Հետևաբար, սույն կարգապահական գործի շրջանակներում էական նշանակություն ունի նախևառաջ այն հանգամանքի պարզաբանումը, թե արդյոք սահմանափակված է եղել Սմբատ Աղաբաբյանի կողմից հեռախոսազանգեր կատարելու հնարավորությունը:*

Այսպես, «**Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները կարող են արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:**

Օրենքի վերոգրյալ դրույթի վերլուծությունից հետևում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները կարող են արգելվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝ **երբ դա անհրաժեշտ է՝ ելնելով քննության շահերից և երբ առկա է քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշում:**

**Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝** կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

**Նույն կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝** Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Պատասխանողի կողմից Կանոնագրքի պահանջների խախտում թույլ տալու փաստը վկայակոչել և ներկայացրել է Դիմողը: Նման խախտումը կարող է իրականության մեջ օբյեկտիվորեն տեղ գտած լինել, դրանք հնարավոր են և

ենթակա են ապացուցման, և համաձայն Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Կարգի վերոգրյալ դրույթների, առ այն, որ Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, ապացուցելու պարտականությունը կրում է փաստը վկայակոչած Դիմողը:

Խորհուրդն արձանագրում է, որ կարգապահական վարույթի ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կհաստատեն ձերբակալված անձ Սմբատ Աղաբաբյանի՝ հեռախոսային խոսակցություններն արգելված լինելու և այդ մասին փաստաբան Մուշեղ Առաքելյանի և իր վստահորդ Սմբատ Աղաբաբյանի կողմից տեղեկացված լինելու փաստերը: Ավելին, փաստաբանը, ինչպես նաև Սմբատ Աղաբաբյանն իրենց կողմից ներկայացված բացատրություններում նշել են, որ նախքան փաստաբանի մոտենալն ու իր հեռախոսը Սմբատ Աղաբաբյանին փոխանցելը, վերջինս զանգեր է կատարել նաև այլ անձանց՝ քննիչների և ոստիկանների ներկայությամբ, ինչն իրեն չի արգելվել: Ուստի, նման պայմաններում Մուշեղ Առաքելյանի մոտ կարող էր ողջամիտ համոզմունք ձևավորվել այն մասին, որ ձերբակալվածի՝ հեռախոսային խոսակցություններ կատարելու իրավունքը սահմանափակված չի եղել: Ավելին, սույն կարգապահական գործի քննության ընթացքում նման որոշում չի ներկայացվել նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Պատասխանողի կողմից իր վստահորդի՝ հեռախոսային խոսակցություններ կատարելու իրավունքը սահմանափակված լինելու հանգամանքը հիմնավորող ապացույցների բացակայության պարագայում Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մուշեղ Առաքելյանի նկատմամբ Կանոնագրքի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված ենթակետով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Միևնույն ժամանակ, Խորհուրդն արձանագրում է, որ վերոգրյալ պատճառաբանությամբ կարգապահական վարույթը կարճման ենթակա լինելու պատճառաբանությամբ գործում առկա մյուս ապացույցներին անդրադառնալն առարկայազուրկ է, ուստի դրանք հետազոտման առարկա չի դարձնում:

**Ելնելով վերոշարադրյալից և «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Խորհուրդը**

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 01.07.2019թ. թիվ 208-Ա/44-19083 որոշմամբ փաստաբան Մուշեղ Առաքելյանի (արտոնագիր թիվ 1762) նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, 20-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2. և 6.2.1 ենթակետերի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պարասխանադրության ենթարկելու**



**հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:**

**2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Տիգրան Խուրշուդյան

**26 նոյեմբերի 2019թ.  
թիվ ԿԳ/161-Ա  
ք. Երևան**